ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 2
Հեռախոս (0286)4-34-23

Թիվ 1476
03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 1-ի N98-Ա, N99-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

Կատ.՝ Լ. Մեժլումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
№ 10871
07 11 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 նոյեմբերի 2017 թվական N98 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N18 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 1-ի N18 արտահերթ նիստի օրակարգը՝
1.Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին Մեղրի համայնքի կողմից ներդրումային ծրագիր ներկայացնելու նպատակով նախաձեռնող խումբ ստեղծելու և խմբի անհատական կազմը հաստատելու մասին:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2017թ. նոյեմբերի 1
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 նոյեմբերի 2017 թվական N99 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին Մեղրի համայնքի կողմից մասնակցության հայտ ներկայացնելու առաջարկությանը:
2.Ստեղծել նախաձեռնող խումբ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցության հայտ ներկայացնելու նպատակով:
3.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրին մասնակցության հայտ ներկայացնող նախաձեռնող խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնարարել ՆԽ-ին՝
1)Կազմել ծրագրային հայտ՝ ՀՏԶՀ-ի կողմից առաջարկված չափանիշներին համապատասխան,
2)Ծրագրի նախապատրաստման և մշակման ընթացքում մասնակից բնակավայրերի բնակչությանը տրամադրել մանրամասն տեղեկատվություն ընթացող աշխատանքների վերաբերյալ,
3)Ձեռնարկել միջոցներ՝ ծրագրի քննարկմանը և մշակմանը համայնքի բնակչության ներգրավվածությունն ապահովելու ուղղությամբ,
4)Բաղադրիչ ենթածրագրերն ուղղել Մեղրի համայնքի բնակավայրերի ընդհանուր սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:
5.Լիազորել նախաձեռնող խմբի անդամներին՝ Մեղրի համայնքի կողմից սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրի հայտը և առաջարկը ՀՏԶՀ-ին ներկայացնելու համար:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2017թ. նոյեմբերի 1

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
ավագանու 2017թ. նոյեմբերի 1-ի
N99-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ

1. Զաքարյան Մխիթար- Մեղրի համայնքի ղեկավար
2. Սամվելյան Արմեն- Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ
3. Մարգարյան Շուշան- Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
4. Հակոբյան Գարեգին - Մեղրի համայնքի ավագանու անդամ
5. Ղազարյան Միեր- Մեղրիի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի պետ
6. Նիկողոսյան Միեր- համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
7. Ծատրյան Մարիամ- համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
8. Հարությունյան Սաթիկ - «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի նախագահ
9. Գևորգյան Ռոմա - «Նախաձեռնություն և զարգացում» ՀԿ-ի նախագահ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ